ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մարտի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Խ-009-31.01.2019-ՊԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 209-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-009-31.01.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն ընդունելի չի համարում՝ ստորև ներկայացված նկատառումներով՝

1. Համաձայն «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ «դիվանագիտական ներկայացուցչին նշանակում և հետ է կանչում Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ», ինչը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից և չի նախատեսում ընթացակարգային կամ քննարկման այլ փուլ քան վարչապետի կողմից նախագահին առաջարկություն ներկայացնելը: Ուստի՝ դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման գործընթացում խորհրդարանի ներգրավվածության օրենսդրական պահանջի գաղափարը կարող է քննարկվել միայն սահմանադրական փոփոխությունների և իշխանության ճյուղերի լիազորությունների տրամաբանության փոխակերպման համատեքստում:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման գործընթացին խորհրդարանի մասնակցությունը կարող է որպես հակակշռող և զսպող գործոն կիրառվել նախագահական կառավարման ձև ունեցող այն հանրապետություններում, որտեղ միանձնյա նշանակողը (նախագահը կամ նախագահի կողմից նշանակված վարչապետը) և նշանակումը հաստատողը (խորհրդարանը) ձևավորվում են միմյանցից անկախ ընտրակարգերով և մեկը մյուսի իշխանության աղբյուր չեն հանդիսանում: Գործադիր իշխանության կադրային քաղաքականության իրականացման խորհրդարանական հակակշռման և զսպման մեխանիզմի առկայությունն արդարացված չէ այն պարագայում, երբ գործադիր իշխանության ձևավորման և դրա ղեկավարի ընտրության իրավունքն ինքնին պատկանում է բացառապես խորհրդարանին:

Բացի դրանից, պարզ չէ՝ որն է նախքան դիվանագիտական ներկայացուցիչների նշանակումն արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովի անդամների հետ առաջադրված անձանց հանդիպման իրավական հետևանքը, հատկապես

հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն նախագծի՝ առաջադրված դիվանագիտական ներկայացուցչի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունն ունենալու է սոսկ խորհրդատվական նշանակություն:

2. Նախագծով առաջարկվող հանձնաժողովի գործունեության ոլորտներին վերաբերող հարցերով օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների և (կամ) դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ հանդիպումներ կազմակերպելու լիազորությունն արդեն իսկ նախատեսված է գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ մշտական հանձնաժողովի լիազորություններից է խորհրդարանական վերահսկողությունը, որի շրջանակներում հանձնաժողովն ազատ է կազմակերպելու նշված հանդիպումները:

Բացի դրանից, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված է, որ «Դիվանագիտական ներկայացուցիչը նշանակումից հետո կարող է հրավիրվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով՝ հանդիպման կամ աշխատանքային քննարկման»:

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի «Մշտական հանձնաժողովները» վերտառությամբ 5-րդ գլխով կարգավորվում են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգի հետ կապված հարաբերությունները: Ընդ որում, այդ գլխով նախատեսված կարգավորումներն ընդհանուր են բոլոր մշտական հանձնաժողովների համար և Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովի լիազորություններն առանձին սահմանելու անհրաժեշտությունը չկա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2019 թվականի N 209 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Արտակ Ապիտոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-009-31.01.2019-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 5
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ԽՍ-009-31.01.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքը լրացնել նոր 12^1 -ին հոդվածով.

«*Հոդված 12^1 . Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովի լիազորությունները*

Բացի Կանոնակարգի 12-րդ հոդվածով նախատեսված լիազորություններից, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովը նաեւ՝

1) օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված՝ Հայաստանի Հանրապետության դեսպանների եւ/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ, նրանց առաջադրվելուց հետո՝ մինչեւ նշանակվելը, կազմակերպում է հանդիպում հանձնաժողովի անդամների հետ,

2) իր գործունեության ոլորտներին վերաբերող հարցերով օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների եւ/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ կազմակերպում է համատեղ հանդիպումներ:

Սույն հոդվածով նախատեսված հանդիպումներն իրականացվում են դռնբաց ընթացակարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնաժողովն իր անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում հանդիպումը դռնփակ ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ: Հանդիպումը դռնփակ անցկացնելու մասին առաջարկություն կարող է ներկայացնել հանձնաժողովի անդամը:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանդիպումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովը կազմում է համապատասխանության վերաբերյալ եզրակացություն, որն ունի խորհրդատվական նշանակություն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Արդեն երեք տարի է, ինչ Հայաստանի Հանրապետությունը, համաձայն նոր Սահմանադրության, խորհրդարանական պետություն է: Մինչդեռ, խորհրդարանի դերի էական բարձրացման ո՛չ արտաքին, ո՛չ ներքին քաղաքականության բնագավառում այդպես էլ ականատես չեղանք: Ներկայացված նախագիծը որոշակի մասով փորձում է շտկել այդ խնդիրը:

Օրենքի սույն նախագծով առաջարկվող կարգավորումների կարիքը զգացվում է բավականին վաղուց. այս բովանդակությամբ նախագիծ ներկայացվել է դեռեւս 5-րդ գումարման Ազգային ժողում, երբ դեռ գործում էր Ազգային ժողովի նախկին կանոնակարգը: Վերջինս արդեն 2 տարի է, ինչ փոփոխվել է, սակայն հարցը դեռ բաց է: Մասնավորապես, անհրաժեշտ է, որպեսզի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը՝

- պարբերաբար տեղեկություններ ստանա օտարերկրյա պետություն-ներում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների եւ/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների գործունեության վերաբերյալ,

- ծանոթանա տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերու-թյուններին առնչվող ընթացիկ իրավիճակին, ինչը կնպաստի արտաքին հարաբերու-թյունների ոլորտում երկրի անվտանգության հաստատման ուղղությամբ օպերատիվ եւ ճշգրիտ քայլեր ձեռնարկելուն՝ ինչպես երկրից դուրս, այնպես էլ երկրի ներսում:

Համաձայն «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ դիվանագիտական ներկայացուցչին նշանակում եւ հետ է կանչում Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Այսինքն, խորհրդարանը դեսպանի, հյուպատոսի կամ միջազգային կազմակերպությունում Հանրապետության ներկայացուցչին նշանակելու հարցում որեւէ լիազորություն չունի, ինչը չի կարող ընդունելի համարվել խորհրդարանական պետությունում: Մինչդեռ, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ մշտական հանձնաժողովն իր իրավասության շրջանակում իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն: Հանձնաժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողությունը չի կարող կրել վերացական բնույթ. այն պետք է նյութականանա հանձնաժողովին որոշակի լիազորությունների վերապահմամբ, ինչը եւ արտաքին հարաբերությունների ոլորտում որոշակիորեն ապահովվում է ներկայացված նախագծի ընդունմամբ:

Ի վերջո, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամների, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատար-մագրված դեսպանների եւ/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավար-ների հետ համատեղ հանդիպումները կնպաստեն Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտում միասնական պետական քաղաքականության վարմանը: